Ռուբեն Սևակ

Հավիտենական հեքիաթը

Ահավասիկ, որ կ՝ըղձամ քեզ՝ անդադրո՛ւմ
Չար, վիրավոր ու անիծված ու տրտո՛ւմ .
Ահավասիկ, որ կը սիրեմ ես քեզի . . .

Ո՞վ քու ստվերդ պտըտցուց իմ հոգվույս
Անարձագանք դամբաններուն մեջ անհո՛ւյս
Ու երդմնեցուց, որ դեռ սիրեմ ես քեզի . . .

Ապրի՞լ ահեղ ճակատագրին միշտ հլու,
Մեռնի՞լ առանց վայրկյան մը քովդ ըլլալու,
Ըսե ինձ, Քո՛ւյր, ա՛խ, կը սիրեմ ես քեզի . . .

Թող այս գիշեր հոգիիս մեջ երգ մ'ըլլա,
Ինչ փույթ, թե չար, թող այդ երգը քուկդ ըլլա,
Որովհետև, Քո՛ւյր, կը սիրեմ ես քեզի . . .

Ահա հոգիս շիրիմներեն փակ ու չար,
Ահա հոգիս, զոր դուն սիրել չը գիջար .
Ահա հոգիս, որ կը սիրե դեռ քեզի . . .

Ոտներուդ տակ կոխոտե ու հետո ալ,
Ինչո՞ւ քայլերդ համբուրե՛լ, գուրգուրա՛լ,
Ինչո՞ւ մահվան սև բաժակեդ սեր մուրալ:

Ների՛ր ինձ, Քո՛ւյր, ա՛խ, կը սիրեմ ես քեզի: